Հավելված
ՀՀ վարչապետի 2015 թ.
մարտի 10 -ի N 189 - Ա
որոշման

Ց Ա Ն Կ

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը	Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման աղբյուրը
1.	«ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	2015 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
2.	«Պետական գույքը հիմնադրամներին վարձակալության հանձնելիս հաշվարկված վարձակալության վճարները՝ որպես Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրամներում կատարվող կամավոր գույքային վճարներ, հիմնադրամների տնօրինությանը թողնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	2015 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
3.	«ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	2015 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
4.	«Պետական սեփականություն համարվող բնակարանները որպես պաշտոնական (ծառայողական) բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 674 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	2015 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

5.	«Պետական գույքի փոխանակության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	2015 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
6.	«Պետական գույքի ընդհանուր օգտագործման տարածքների սպասարկման պայմանագրերի կնքման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	2015 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ